ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 12. Ավագանու լիազորությունները

1. Ավագանին՝

25) սահմանում է առևտրի և սպասարկման ոլորտի կազմակերպությունների որակավորման աստիճանների չափորոշիչներն ու շնորհման կարգը.

25.1) սահմանում է շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները և վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների տեսակները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը.

25.2) սահմանում է շրջիկ առևտրի կետերի կամ տրանսպորտային միջոցների հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերի կամ տրանսպորտային միջոցների հատուկ տարածք տեղափոխման և պահպանման համար վճարների չափը.

25.3) սահմանում է Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, գբոսայգիներ և այլ տարածքներ) շրջածախ առևտրի իրականացմանը ներկայացվող պահանջները, պայմանները, շրջածախ առևտուր իրականացնելու միջոցով վաճառվող ապրանքների տեսակները և շրջածախ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը:

Հոդված 52. Քաղաքապետի լիազորությունների ընդհանուր բնութագիրը

1. Քաղաքապետն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4) սահմանում է Երևանի շենքերի և շինությունների, ինչպես նաև հողամասերի համարակալումը.

4.1) տալիս է համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն.

4.2) սահմանված կարգով տալիս է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվություն.

4.3) սահմանված կարգով տալիս է Երևան քաղաքում շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվություն.

4.4) սահմանում է շրջիկ առևտրի իրականացման համար նախատեսված թույլատրելի վայրերը գծանշման և նշանով կահավորման կարգը.

4.5) սահմանված կարգով տալիս է Երևանում շրջածախ առևտուր իրականացնելու թույլտվություն;